

ՍՈՍԻՍ ՏՆՎԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԹՅԱ ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ներածություն: Սոսին (*Platanus* L.) բուսական աշխարհի հսկաներից է: Նրա բարձրությունը հասնում է մինչև 50մ-ի, իսկ բնի տրամագիծը՝ 18մ-ի: Սոսին տարածված է միջերկրծովյան ավազանում, Մերձավոր Արևելքում, հայկական բարձրավանդակում (3, 4, 5): Սյունիքի մարզի Ծավ գյուղի մոտ գտնվում է համրապետության միակ խոշոր սոսիների պուրակը, որը զբաղեցնում է 80հա տարածություն և ներկայումս արգելանոց է (1, 3, 5): Հայաստանի հնադարյան մայրաքաղաք Արմավիրում գտնվող Անահիտ աստվածուհու մեհյանը շրջապատված էր Սոսյաց հռչակավոր անտառով: Սոսին, հատկապես երիտասարդ տարիքում, շատ արագ է աճում և մի քանի տասնամյակի ընթացքում հսկայական չափերի է հասնում:

Բնական պայմաններում սոսին ալյուվիալ հողերի տիպիկ բնակիչ է, հանդիպում է գետահովիտներում, լճերի ափերին և կիրճերի խորքերում: Ունի հզոր, խոր գնացող, խիտ ճյուղավորված, առանցքային արմատային համակարգ: Լավ է դիմանում ժամանակավոր երաշտին: Բավականին ցրտադիմացկուն է, դիմանում է մինչև -25°C սառնամանիքին: Մեր համրապետության պայմաններում լավ է աճում ծովի մակերևույթից մինչև 1400մ բարձրության վրա, որից ավելի վեր ամբողջովին ցրտահարվում է: Սոսին բարձր է գնահատվում դեկորատիվ պարտեզագործության և բնակավայրերի կանաչապատման բնագավառում՝ որպես հզոր, լայնաստղաթ, գեղեցիկ և երկարակյաց ծառատեսակ:

Երևանում սոսին կանաչապատման տեսակաշարի հիմնական ներկայացուցիչն է, լավ է հարմարվել քաղաքի յուրահատուկ էկոլոգիական պայմաններին՝ գազերին, ծխին, փոշուն և այլն: Սոսին լավ է բազմանում սերմերով (հավաքում, ցանում են աշնանը և գարնանը), անդալիսով, ինչպես նաև կտրոնավորմամբ (1, 2, 4):

Հայտնի են սոսու 7 տեսակ և մի քանի հիբրիդներ, որոնք տարածված են Հյուսիսային Ամերիկայում և միջերկրծովյան ավազանում: Հայաստանում հանդիպում է սոսու 1 տեսակ՝ վայրի վիճակում և ներմուծված են 2 տեսակ՝ արևելյան և թխկատերև:

Նյութ և մեթոդ: Սոսի արևելյան - *Platanus orientalis* L. - պատկանում է սոսագգիների (*Platanaceae* Lindl) ընտանիքին:

Արևելյան սոսին բազմացվել է սերմերով և կտրոններով: Ի տարբերություն մյուս ծառատեսակների, ինչպես կտրոնները, այնպես էլ սերմերը /ընկուզիկը/ մթերում են երկրորդ տարվա ճյուղերից և սերմերից:

Գիտափորձերը դրվել են 2003-2006թթ. ընթացքում, սերմերի ցանքսը և կտրոնների մթերումը կատարվել են վաղ գարնանը: Որպես լցանյութ օգտագործվել են 3-10մ մասնիկների տրամագծով հրաբխային սև և կարմիր խարամները: Մթերված կտրոնները խրամատավորվել են խոնավ ավազի մեջ, որտեղ ջերմաստիճանը բարձր չէ $2-3^{\circ}\text{C}$ -ից: Տնկարկը կատարվել է ապրիլ ամսին, երբ լցանյութի ջերմաստիճանը եղել է $5-10^{\circ}\text{C}$: Խրամատավորված յուրաքանչյուր կտրոնից ստացվել են 13-17սմ երկարությամբ և 3-4 հանգույց ունեցող 2-3 կտրոն, որոնք ֆիզիոլոգիական խոնավություն ապահովելու և կաշտողականությունը բարձրացնելու նպատակով, 12-16 ժամ մշակվել են հետերոաուքսինի 0.02%-անոց լուծույթով: Տնկարկը կատարվել է 70 կտրոն/մ² սխեմայով: Գ.Ս.Դավթյանի սննդարար լուծույթը տրվել է գարնանը և ամռանը՝ օրական 1-2, իսկ աշնանը՝ 1 անգամ, աստիճանաբար պակասեցնելով հասցվել է տասնօրյակում՝ 1 անգամ:

Վեգետացիայի ընթացքում, փորձի բոլոր տարբերակներում, կատարվել են ֆենոլոգիական դիտարկումներ և կենսամետրիկ չափումներ:

Արդյունքներ և բնարկում: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ կտրոնների կաշողականությունը փորձարկված լցանյութերում շատ ցածր է, այն կազմել է 5-9%, իսկ աճը գերազանցել է սերմնաբույսերին մոտ 1.6 անգամ (աղ.1):

Արևելյան սոսու կտրոնների և սերմերի աճն ու տնկիների ելը բացօթյա հիդրոպոնիկայում

Աղյուսակ 1

Լցանյութ	Կտրոն, հատ/մ ² սերմից ստաց- ված բուսակ, հատ/մ ²	Ծառաչափական ցուցանիշները					Ստացված տնկիների քանակը, հատ/մ ²
		մեկ տարեկան		երկու տարեկան		միջին աճը երկրորդ տարում, սմ	
		բարձ- րութ- յունը, սմ	բնի տրա- մա- զիծը, մմ	բարձ- րութ- յունը, սմ	բնի տրա- մա- զիծը, մմ		
Սև խարամ	70	107,0	13,0	295,0	32,0	188,0	6
	48	67,0	9,4	200,0	18,7	133,0	48
Կարմիր խարամ	70	91,0	11,6	206,0	25,3	115,0	4
	26	55,0	12,1	184,0	16,3	129,0	26

Սերմերի ծլունակության, աճի, զարգացման և արդյունավետության համար լավագույն լցանյութ է հանդիսացել հրաբխային սև խարամը, որտեղ 1մ²-ից ստացվել է 48 բուսակ: Սերմնաբույսերի միջին աճը առաջին տարում կազմել է՝ բարձրությունը՝ 67սմ, բնի տրամագիծը՝ 9.4մմ: Երկրորդ տարում այդ ցուցանիշները կազմել են՝ 133սմ և 9.3մմ, համապատասխանաբար (աղ.1, նկ.1, 2):

Սոսու երկրորդ տարվա ընթացիկ աճի ցուցանիշների (129-133սմ) համադրումը առաջին տարվա հետ (55-67սմ) թույլ է տալիս փաստել, որ ամենող մշակույթի պայմաններում դիտվում է աճի ուժգնացում, որը բացատրվում է արմատային համակարգի ամենամյա հետզհետե հզորացմամբ:

Պարզվել է, որ հիդրոպոնիկայի պայմաններում հրաբխային սև խարամի վրա 2 տարում 1մ²-ից ստացվել է 48 հատ, ստանդարտին համապատասխանող, տնկիներ, որոնք ունեն զարգացած արմատային համակարգ և կարող են հաջողությամբ օգտագործվել կանաչապատման և անտառապատման բնագավառում:

Եզրակացություն: Սոսու բազմացումը նպատակահարմար է կատարել սերմերով: Սեր կողմից մշակված սոսու տնկիների հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիան արդյունավետ է և հեռանկարային, ինչը կարող է հիմք հանդիսանալ այդ արժեքավոր ծառատեսակի տնկիների ինտենսիվ արտադրություն կազմակերպելու համար:



Նկ.1. Մեկ տարեկան արևելյան սոսու ընդհանուր տեսքը հրաբխային և խարամ լցանյութում



Նկ.2. Երկու տարեկան արևելյան սոսու ընդհանուր տեսքը հրաբխային և խարամ լցանյութում

**PRODUCTION OF THE PLATAN'S PLANTING MATERIAL UNDER OPEN-AIR
HYDROPONIC CONDITIONS**

Summary

The comparison of the indicators of the current growth of two-year platan with the data of one-year one permits to argue, that in conditions of soilless cultivation some kind of annual intensification of growth is observed, which is explained by the annual increasing enhancement of the root system. It has been cleared out, that in case of hydroponic conditions, upon volcanic black slag, in terms of 2 year, from 1m² 48 saplings corresponding to the standard were received, which have a developed root system and can be successfully used in the sphere of planting greenery and the forest-planting.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Ս.Լ. Հայաստանի դեմդրոֆլորան, գիրք 1.-"Լույս" հրատարակչություն, Երևան, 1985, էջ 139-144:
2. Հովսեփյան Ա.Հ., Էլոյան Ս.Ա., Պողոսյան Գ.Յ. Անտառների վերականգնումը հիդրոպոնիկ տնկիներով.-ՀՀ ԳԱԱ ՀՊԻ «Հաղորդումներ», N30, Երևան, 2005, էջ 42-48:
3. Варданян.Ж.А. Деревья и кустарники Армении в природе и культуре.- Ереван, 2003, 367 с.
4. Григорян А.А. Ценные виды деревьев и кустарников лесов Армении, Ереван, 1973, 230 с.
5. Казарян В.О, Арутюнян Л.В., Хуршудян П.А., Григорян А.А.,Барсебян А.М. Научные основы облесения и озеленения Армянской ССР, Ереван, Изд. АН Арм. ССР, 1974, 347с.